(կազմված է "___"._____.202__թ. և բաղկացած է Number of pages թերթից)
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է**
**«NAME OF THE FOUNDATION»**
**DIRECTION ՀԻՄՆԱԴՐԱՄ**
հիմնադրելու մասին միակ հիմնադրի
"___"._____.202__թ. որոշմամբ

Միակ Հիմնադիր/Գլխավոր տնօրեն

_____

Հրաչյա Մարգարյան

**Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ**
**ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ**
"___"._____.202__թ.

գրանցման համար՝ _____

ՀՎՀՀ՝ _____

աշխատակից՝

_____

# «NAME OF THE FOUNDATION»
## DIRECTION
## ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Name of the Foundation» Direction հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, ներդրումային զարգացման և (այլ) հանրօգուտ նպատակներ:

2. Հիմնադրամի միակ հիմնադիրն է ՀՀ քաղաքացի Name Surname (Անձնագիր՝ Number of Passport, տրված՝ "___"._____.202__թ. Number-ի կողմից, հասցե՝ ՀՀ, City, Street number, office or flat number., ՀԾՀ՝ Social Number):

3. Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, վերաբերելի միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և հիմնադրամի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Հիմնադրամի անվանումն է՝

   հայերեն՝ «NAME OF FOUNDATION» DIRECTION ՀԻՄԱԴՐԱՄ,

   անգլերեն «NAME OF FOUNDATION» DIRECTION FOUNDATION,

   ռուսերեն՝ ФОНД DIRECTION «NAME OF FOUNDATION»,

   ֆրանսերեն «NAME OF FOUNDATION» FONDATION DE DIRECTION,

   գերմաներեն՝ «NAME OF FOUNDATION» DIRECTION STIFTUNG,

   իտալերեն՝ «NAME OF FOUNDATION» FONDAZIONE DI DIRECTION,

   իսպաներեն՝ «NAME OF FOUNDATION» FUNDACIÓN DE DIRECTION.

6. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ՀՀ, City, Street number, office or flt number.:

7. Հիմնադրամի շահառուներ են համարվում հիմնադրամի կանոնադրական նպատակների շրջանակում գործունեություն ծավալող և այդ ոլորտներում ծրագրեր իրականացնող կամ դրանց մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները,

8. Հիմնադրամի խորհրդանիշը և դրա նկարագրությունը ներկայացված է սույն Կանոնադրության Հավելված 1-ում:

## II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

9. Հիմնադրամի պետական գրանցման պահից ձեռք է բերվում իրավաբանական անձի կարգավիճակ:

10. Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

11. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային և այլ հաշիվներ, իր պատկերով կլոր կնիք, դրոշմ, ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ և այլ անհատականացման նշաններ: Իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

12. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ

գույքով:

13. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամի պարտավորությունների համար:

14. Հիմնադրամն իրավունք ունի ստեղծելու ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

## III.ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

15. Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝

16. Ձեռնարկատիրության, ներդրումների, նորարարության, տեխնոլոգիաների, արտահանման, արտադրության և սոցիալական և մշակութային ոլորտների զարգացման համար ինստիտուցիոնալ ռեսուրսների ձևավորումը. EXAMPLE OF GOALS:

    1) Մասնավոր ներդրումների ներգրավում ներդրումային ծրագրերի իրականացման համար.

    2) Տնտեսվարող սուբյեկտներին տեխնիկական և ֆինանսական աջակցության տրամադրումը.

    3) Շահառուներին բիզնես վարելու համար անհրաժեշտ գործընթացներում համակողմանի աջակցության տրամադրումը.

    4) Աջակցել գիտական, տեխնիկական և նորարարական ծրագրերի մշակմանը, ստեղծմանը և իրականացմանը.

    5) Ապահովել տեխնոլոգիաների փոխանցման արդյունավետ մեխանիզմների մշակումը, ներդրումը և զարգացումը.

    6) Մասնակցել նորարարության և բիզնես միջավայրի զարգացմանը՝ աշխատանքային մեխանիզմների, կառույցների և նորարարական լուծումների ստեղծման միջոցով.

    7) Աջակցություն կրթության, գիտության, մշակույթի, արվեստի, առողջության, ֆիզիկական սպորտի. Կրթության, սպորտի և զբոսաշրջության ոլորտում սոցիալապես նշանակալի նախագծերի իրականացում.

    8) Աջակցել կամավորական գործունեության իրականացմանը.

    9) Աջակցել քաղաքացիների և երիտասարդների ծանոթացմանը մշակույթին և մշակութային արժեքներին: Երիտասարդ սերնդին դեպի քրիստոնեական ժառանգության պահպանմանը ներգրավելու համար միջոցառումների ձառնարկումը.

    10) Աջակցություն ցուցաբերել կրթության, գիտության, մշակույթի, արվեստի բնագավառներում, անձի և կարողությունների զարգացման համար միջոցառումների ձեռնարկումը.

    11) Քաղաքացիների առողջությունը պահպանելու և հիվանդությունների կանխարգելման համար առողջ ապրելակերպի խթանումը և քաղաքացիների բարոյահոգեբանական վիճակի բարելավումը.

    12) ընտանիքի դերի ամրապնդմանը, մայրությանը, երեխաների և հայրության պաշտպանությանն ուղղված, երեխաների և երիտասարդների քրիստոնեական, բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակություն ծրագրերին, մանկական և երիտասարդական շարժումներին, մանկական և երիտասարդական կազմակերպություններին ուղղված աջակցությունը,

    13) կրոնական և մշակութային նշանակություն ունեցող քրիստոնեական եկեղեցիների պահպանմանն ու վերականգնմանն աջակցելը.

    14) Աջակցել սոցիալական գովազդի զարգացմանը, ստեղծմանը և տարածմանը:

## IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

17. Հիմնադրամն ինքնուրույն որոշում է իր կառուցվածքը և գործունեության ձևերը:

18. Հիմնադրամն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար իրավունք ունի՝

– անարգել տարածելու իր գործունեության մասին տեղեկություններ.

– պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

– ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ.

– ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը.

– ձեռք բերելու, ստանալու, վարձակալելու կամ այլ պայմաններով, այդ թվում՝ նաև անվճար, օգտագործելու անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք.

– օտարելու կամ վարձակալության և անհատույց օգտագործման հանձնելու հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

– ինքնուրույն կազմավորելու իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ դրամաշնորհների, նվիրատվությունների, ներդրումների, փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալու փոխառություններ (վարկեր), դրամաշնորհներ, նվիրատվություններ, այդ թվում՝ արտարժույթով.

– իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

19. Հիմնադրամը՝

– Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ կարող է անդամակցել միջազգային ոչ կառավարական և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին.

– կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն միայն այն դեպքում, երբ դա ծառայում է իր նպատակներին: Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

20. Հիմնադրամն իրավունք ունի անձամբ զբաղվելու միայն սույն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով:

21. Հիմնադրամը պարտավոր է՝

– գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան.

– օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

– օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.

– իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

## V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

22. Հիմնադրամն իր նպատակներին համապատասխան կարող է անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝ ACTIVITIES OF THE FUND, The text must be taken from the classifier https://www.petekamutner.am/tsOS_EAClassifier.aspx, EXAMPLE:

- Կրթության բնագավառում խորհրդատվական գործունեություն
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն
- Տեղեկատվական ծառայությունների մատուցում
- Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն, վեբ-պորտալների հետ կապված գործողություններ
- Տվյալների հիմնապաշարների և տեղեկատվական ռեսուրսների մշակում և կիրառում
- Վեբ-պորտալների հետ կապված գործողություններ
- Նորությունների գործակալություններ
- Անշարժ գույքի հետ կապված գործունեություն
- Սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ
- Անշարժ գույքի հետ գործառնություններ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով
- Անշարժ գույքի կառավարում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով
- Իրավաբանական և հաշվապահակ
- Հաշիվների կազմում, հաշվապահական հաշվառում, վերստուգիչ ծառայություններ (աուդիտ), խորհրդատվություններ հարկադրման հարցերով
- Ձեռնարկատիրական և կառավարման այլ հարցերով խորհրդատվական գործունեություն
- Գովազդային գործունեություն և շուկայի իրավիճակի հետազոտություն
- Շուկայի իրավիճակի հետազոտություն և հասարակական կարծիքի ուսումնասիրում
- Մտավոր սեփականության և համանման արտադրանքի, բացի հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքները, լիզինգ
- Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն
- Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող վարչարարական և լրացուցիչ այլ գործունեություն
- Կազմակերպությունների վարչարարական գրասենյակների համալիր գործունեություն
- Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում
- Հաշվապահական դասընթացներ
- Լեզուների դասընթացներ
- Կրթության բնագավառում խորհրդատվական գործունեություն
- Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն
- Պատմական վայրերի ու կառույցների շահագործում և պահպանում

## IV.ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

23. Հիմնադրամը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

24. Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:

25. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակով:

26. Հիմնադրամի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

   – հիմնադրի ներդրումը.

   – ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.

   – դրամական մուտքերը պետական բյուջեից.

   – վարկերը և դրամաշնորհները.

   – հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

   – հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում).

   – օրենքով չարգելված այլ միջոցներ:

27. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա բանկերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բացել հաշվարկային ու այլ հաշիվներ (այդ թվում՝ տարադրամային):

28. Հիմնադրամի բոլոր գործարքները և բանկային հաշիվներից վճարումները կատարվում են համապատասխան ֆինանսավորող կողմերի հետ համաձայնեցված կարգով և հիմնավորվում են անհրաժեշտ փաստաթղթերով:

29. Հիմնադրամի ֆինանսական միջոցներն օգտագործվում են հիմնադրամի կանոնադրական նպատակներին համապատասխան:

30. Հիմնադրամը հրապարակում է տարեկան հաշվետվություն իր միջոցների օգտագործման մասին:

## V.ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

31. Հիմնադրամի կառավարման մարմիններն են հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և Գլխավոր տնօրենը:

32. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ), որը ղեկավարում է հիմնադրամի գործունեությունը՝ համաձայն սույն կանոնադրության:

33. Խորհուրդը կազմված է երեք անդամից և կազմավորվում է հիմնադրի կողմից:

## VI. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

2) հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

6) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

7) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

9) հոգաբարձուների խորհրդի նախագահի և Գլխավոր տնօրենի, ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

10) հիմնադրամի՝ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.

11) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

12) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

13) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

14) տարեկան մեկ անգամ պարբերականությամբ Գլխավոր տնօրենի հաշվետվությունների լսումը.

15) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

16) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

17) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

18) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

19) օրենքով, կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

35. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին Խորհուրդն իրականացնում է վերահսկողություն հիմնադրամի գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև հիմնադրամի Գլխավոր տնօրենի գործունեության նկատմամբ:

36. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Խորհրդի որոշումները կարող են ընդունվել նաեւ հեռակա կարգով:

37. Խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

38. Խորհրդի նախագահը անձամբ է նախագահում խորհրդի նիստերը, իսկ խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները՝ խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

39. Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

40. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է չընդունված: Խորհուրդը հիմնադրամի Գլխավոր տնօրենին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների (2/3) մեծամասնությամբ: Խորհուրդը որոշումներն ընդունում է այլ կարգով՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում:

41. Խորհրդի նիստերն օրենքով սահմանված կարգով արձանագրվում են:

## VII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

42. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:

43. Գլխավոր տնօրենին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է խորհուրդը:

44. Գլխավոր տնօրենը՝

    1) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.

    2) ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

    3) գործում է առանց լիազորագրի.

    4) տալիս է լիազորագրեր.

    5) Կազմակերպում է հիմնադրամի աշխատանքը,

    6) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

    7) Խորհրդի կողմից հաստատված բյուջեի շրջանակում սահմանում է աշխատողների աշխատանքի վարձատրության չափերը,

    8) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

    9) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

    10) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ, աշխատանքի բաշխումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.

12) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

## VIII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

45. Հիմնադրամը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի հրապարակում է հաշվետու տարվա հաշվետվությունն իր գործունեության մասին:

## IX. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

46. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը կազմակերպվում է ու վարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և համապատասխան ֆինանսավորող կողմերի պահանջների:

## X. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

47. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

48. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

«NAME OF THE FOUNDATION» DIRECTION ՀԻՄԱԴՐԱՄ

Կանոնադրության Հավելված 1

Հիմնադրամի խորհրդանիշի պատկերը

Հիմնադրամի խորհրդանիշի նկարագրությունը

Web:

Email: